

Հանրապետական առարկայական օլիմպիադա

Հայ գրականություն

XII դասարան

(տևողությունը՝ 180 րոպե)

Միբեյի՛ մասնակից, անկաշառ սիրով ու վստահությամբ մտի՛ր գրականության կախարդական աշխարհ ու դարձի՛ր այդ աշխարհի լիիրավ տերը:
Հաղթանակ և բերկրանք եմ մատթում քեզ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան

1.Գրի՛ր Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթի և Դեմիրճյանի «Քաջ Նազար» պիեսի մեկնաբանությունները՝ ըստ հեղինակների: Ո՞ր հեքիաթն էն մշակել գրողները: Ուրիշ ի՞նչ գրողներ են մշակել այդ հեքիաթը: Գրի՛ր Դեմիրճյանի կարծիքը Նազարի կերպարի մասին: 5 մ.

2.Վերլուծի՛ր Հովհաննես Շիրազի «Թագադրում» բանաստեղծությունը. Ուրիշ ո՞ր բանաստեղծն է արտահայտում նմանատիպ տրամադրություն: Համադրի՛ր այդ բանաստեղծությունները: Ի՞նչ շրջասույթ կարո՞ղ ես գտնել Շիրազի համար: 5 մ.

3.Ի՞նչ շրջասույթ կա Վիլյամ Սարոյանի մասին: Ո՞ւմ է ձոնել Սարոյանը իր «Մարդկային կատակերգություն» վիպակը: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Սարոյանը իր ստեղծագործություններով: Գրի՛ր Սարոյանի մեկնաբանությունը իր ստեղծագործության մասին: 3 մ.

4.Խաչիկ Դաշտենցի ո՞ր ստեղծագործությունն է համահունչ այս օրերին: Մեկնաբանի՛ր վերնագիրը: Գրի՛ր հերոսներից որևէ մեկի բնութագիրը: 3 մ.

5.Ո՞վ է «Ձորի Միրոն» ստեղծագործության հեղինակը: Ի՞նչ խորհուրդ ունի այս հրաշալի երկը: Գրի՛ր Ձորի Միրոյի մասին, մեկնաբանի՛ր նրա դատողությունները որդուն ռազմաճակատ ճանապարհելիս: Ո՞վ է էկրանավորել «Ձորի Միրոն», ո՞վ է խաղում Միրոյի դերը: Ի՞նչ շրջասույթ կա Գալշոյանի մասին, եթե չգիտես, փորձի՛ր ինքդ գտնել: 4 մ.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան